



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0095, Մարշալ Բաղրամյան պողոտա 19

Հեռ.՝ 011 513-677

14.12.2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Եկմայան 1/6 հասցեում գտնվող «Օրրան» բարեգործական կազմակերպության հարևանությամբ ընթանում են հասարակական նշանակության շինության կառուցման աշխատանքներ՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինարարական թույլտվության հիման վրա:

Ըստ «Օրրանի» տնօրինության հրապարակային հայտարարությունների, շինարարական աշխատանքները տեղի են ունենում «Օրրանի» շենքից 1.6 մետր հեռավորության վրա, ինչը չի համապատասխանում տրված շինարարական թույլտվությանը: Միևնույն ժամանակ, ըստ փորձագիտական վերլուծությունների, չեն ապահովվում ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» նորմի 150-րդ կետը և ՀՀՇՆ 30-01-2024 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմի 439-րդ կետի պահանջները:

Հիշեցնեմ, որ «Օրրանը» բարեսիրական կասմակերպություն է, որը կրթական, մշակութային, հոգեբանական, առողջապահական և սոցիալական ծառայություններ է տրամադրում սոցիալապես անապահով երեխաներին, ճգնաժամային ընտանիքներին, միայնակ մեծահասակներին: Քաղաքաշինական նորմերի խախտումով կառուցված շինությունը կարող է վտանգել կազմակերպության շահառու երեխաների և տարեցների անվտանգությունը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածի համաձայն խնդրում եմ տեսչական ստուգում ձեռնարկել և պարզել՝ արդյոք Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության հիմնավորվածությունը, ինչպես նաև տվյալ հասցեի կառուցապատման համապատասխանությունը ՀՀ-ում գործող քաղաքաշինական, տեխնիկական, հակահրդեհային անվտանգության և այլ նորմերին համապատասխանում է:

Հարգանքով՝  
ՀՀ ԱԾ պատգամավոր  
Լիլիթ Գալստյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԳՍ//414-2024

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր  
Լ. Գալստյանին

Ի պատասխան ՀՀ վարչապետի  
աշխատակազմի ղեկավարի 05.01.2024թ.  
թիվ 02/05.1/200-2024 գրության

Հարգելի՛ տիկին Գալստյան

«Օրրան» բարեգործական կազմակերպության հարևանությամբ իրականացվող շինարարական աշխատանքների մասին Ձեր կողմից ՀՀ կառավարությանն ուղղված գրավոր հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: Վերջինիս ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ք. Երևան Եկմալյան 1-ին փողոց 6/3 հասցեում իրականացվող շինարարական աշխատանքների համար առկա է Երևան համայնքի ղեկավարի կողմից կառուցապատող Արգամ Հովհաննիսյանին 2022 թվականի դեկտեմբերի 15-ին տրամադրված հ.01/18-Դ-93670-2390 շինարարության թույլտվությունը, ինչպես նաև «ԷՅՋ ԱՅ ՍԻ ԴԻՋԱՅՆ» ՍՊ ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 27-ին տրված դրական երաշխավորագիրը, համաձայն որի՝ աշխատանքային նախագիծը մշակվել է ՀՀ-ում գործող օրենսդրության և շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Կառուցապատողի կողմից Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին է տրամադրվել նաև համաձայնագիր՝ կնքված 2022 թվականի մարտի 18-ին, կառուցապատողի և «ՕՐՐԱՆ» բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ Արմենուհի Հովհաննիսյանի միջև՝ համաձայն որի, վերջինս, հանդիսանալով «Օրրան» բարեգործական

Կատարող՝ Վարչական վերահսկողության իրականացման բաժնի փորձագետ Լ. Հովհաննիսյան

Հեռ. 010 51 51 39

հասարակական կազմակերպության հիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ, տալիս է իր համաձայնությունն առ այն, որ չունի առարկություն քաղաքացի Արգամ Հովհաննիսյանին պատկանող հողամասում երկհարկանի հասարակական նշանակության շինության կառուցման վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են վարչական կամ դատական կարգով:

X

---

Հարգանքով՝

/ Գ. Սանոսյան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0095, Մարշալ Բաղրամյան պողոտա 19

Հեռ.՝ 011 513-677

24.10.2023թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԳՄՍ կայքէջում տեղեկություն կա այն մասին, որ ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 19-ի նիստում **հավանության է արժանացել «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը**: Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածի համաձայն, խնդրում եմ տրամադրել ինձ վերոնշյալ հայեցակարգը :

Հարգանքով՝

ՀՀ ԱԾ պատգամավոր  
Լիլիթ Գալստյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,  
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

**МИНИСТР**

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,  
CULTURE AND SPORT  
**MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,  
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

N 01/9.1.1/29863-2023

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ  
ՏԻԿԻՆ ԼԻԼԻԹ ԳԱԼՍՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ տիկին Գալստյան,**

Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N 02/05.31/36781-2023 գրությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն վերահասցեագրված Ձեր 2023 թվականի հոկտեմբերի 24-ի գրության՝ կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը հաստատելու մասին» N 1802-Լ որոշումը և որոշման հավելվածը:

Առդիր՝ 1 նիշք:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**X**

Կատարող՝ Նաիրա Սուքիասյան,  
հեռ.՝ (+374) 10-210-140/118



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1802-Լ

«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի հավելվածի 82-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Հ Ա Յ Ե Յ Ա Կ Ա Ր Գ

«ԱԿԱՂԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ

1. ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. «Ակաղեմիական քաղաք» նախագիծը Հայաստանի Հանրապետության այն ծրագիրն է, որի միջոցով իրացվելու է միջազգային գիտակրթական և նորարարական քարտեզի վրա ակտիվ և արժեքավոր դերակատարի դիրք զբաղեցնելու հավակնությունը: Այն հանդիսանալու է ժամանակակից հետազոտական և նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայր, որում բուհական կրթությունը կազմակերպվելու է՝ անմիջականորեն լծորդվելով հետազոտությունների հետ, այդպիսով ապահովելով գիտելիքի և հմտությունների ձեռքբերումն ու ամրապնդումը կիրառության մեջ և իրական համատեքստում: Ակաղեմիական քաղաքը նաև երաշխավորելու է ձեռք բերված գիտելիքի լավագույն կիրառությունը՝ խարսխվելով հետազոտությունների գերազանցության, կիրառական արդյունքների հայտնաբերման, զարգացման և դրանց փոխանցման, նորարարական գործունեության խթանման և մտավոր սեփականության պաշտպանության սկզբունքների վրա, այսպիսով ծառայելով հանրությանը՝ սոցիալական, տնտեսական, մշակութային և անվտանգային մարտահրավերների հաղթահարման համար, ինչպես նաև հանրային և մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ ապահովելու է ստեղծվող գիտելիքի, տեխնոլոգիաների և նորարարությունների ներդրումն ու ծառայեցումը հանրային բարեկեցությանն ու առաջընթացին:

2. Ակաղեմիական քաղաքը ներառելու է նաև մտավոր ժամանցի և մշակութային հաղորդակցման ենթակառուցվածքներ, որոնք դառնալու են նաև նախագծի հանրային վերափոխման գործիքներից մեկը:



3. Ակադեմիական քաղաքը հանդիսանալու է միջգիտակարգային, միջմշակութային, միջազգային շփումների հարթակ, ինչը հանգեցնելու է թե՛ գիտակրթական, թե՛ սոցիալական նորարարությունների:

4. Ակադեմիական քաղաքի հիմնադրման իրավական հիմքերը դրված են «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքում (այսուհետ՝ օրենք), որի համաձայն նախատեսված է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ: Օրենքով նախատեսված է, որ ակադեմիական քաղաքը կապահովի ուսումնական հաստատությունների, գիտական ու արտադրական կազմակերպությունների միջև ցանցային, սիներգիական համագործակցության ընդլայնումը՝ ներառելով ժամանակակից վիրտուալ, սոցիալական, ինչպես նաև ֆիզիկական ենթակառուցվածքները:

5. Ակադեմիական քաղաքը հանդիսանում է նաև Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված մի շարք կարևորագույն թիրախների ապահովման առանցքային միջոց, որոնք են՝

1) ունենալ առնվազն չորս բուհ միջազգային վարկանիշային աղյուսակների լավագույն 500-ի մեջ.

2) առնվազն կրկնապատկել օտարերկրյա ուսանողների թիվը՝ բարձրացնելով բարձրագույն կրթության համակարգի միջազգային հեղինակությունը:

6. Այս թիրախների իրացումն անխուսափելիորեն առաջ է բերում համապատասխան ենթակառուցվածքների պահանջ, որոնցից են ուսումնառության կազմակերպման արդի պայմանները, ժամանակակից գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ լաբորատոր, նախատիպավորման, փորձարկման և այլ ենթակառուցվածքները, մարզական, հանգստի, գրադարանային, հանրակացարանային և այլ միջավայրերը, որոնք մրցունակ հետազոտությունների և բարձրագույն կրթական համակարգի նախապայման են:

7. Ակադեմիական քաղաքը, այսպիսով, հանդիսանում է մրցունակ կրթական, գիտահետազոտական, նորարարական գործունեությանն ուղղված ֆիզիկական, իրավական, կառավարչական ենթակառուցվածքների ամբողջություն, այդպիսով դառնալով նաև պետական հետազոտական և ինովացիոն համակարգի կարևորագույն բաղադրիչը՝ ապահովելով նաև պահանջարկի վրա հիմնված հետազոտությունների համար մտավոր և նյութական ռեսուրս: Ակադեմիական քաղաքն ապահովելու է նաև արագ զարգացող տնտեսության, գիտության և տեխնոլոգիաների միջազգային և տեղական աշխատաշուկայում մրցունակ աշխատուժին ներկայացվող արդի պահանջները, ինչպես նաև գիտելիքի և տեխնոլոգիաների առևտրայնացման ու փոխանցման գործիքակազմը:

8. Որպես ծրագրի կայացման գրավական, ակադեմիական քաղաքում տեղակայված համալսարաններում հիմնովին վերանայվելու են կրթության կազմակերպման մեթոդաբանությունը և կրթության բովանդակությունը՝ առաջատար գործընկեր համալսարանների հետ համատեղ աշխատանքի և աշխատակիցների վերապատրաստումների միջոցով: Այս գործընթացը կազմակերպվելու է ֆիզիկական ենթակառուցվածքների կառուցմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր կլաստերի համար ձևավորելով մասնագիտական տարբեր մակարդակի խորհուրդներ:

9. Ծրագրի իրականացման մյուս կարևորագույն բաղադրիչը հանդիսանում է ակադեմիական քաղաքում իրականացվող հետազոտությունների և մշակումների մակարդակը, որի համար սահմանված են լինելու առավել բարձր պահանջներ համաշխարհային նշանակության և արդիականության առումով, ինչպես նաև ստեղծված են լինելու բոլոր պայմանները բեկումնային հետազոտությունների իրականացման համար, որոնց համար ակադեմիական քաղաքն ապահովելու է շարժունությունը և միջդիսցիպլինարությունը շնորհիվ ինչպես նրա, որ տարբեր բնագավառների հետազոտողներ գտնվում են ֆիզիկապես մոտ տարածության մեջ, այնպես էլ ուսանողության և գիտնականների միջև դիսցիպլինաների հատումներում տարաբնույթ միջոցառումների ապահովմամբ և դրանց խրախուսմամբ:

10. Ակադեմիական քաղաքի նախագծումն իրականացվելու է՝ վեր բարձրանալով բարձրագույն կրթության և հետազոտությունների վերաբերյալ ձևավորված



ավանդական պատկերացումներից, և ստեղծվելու է մի տարածություն, որը գեղեցիկ և կանաչ միջավայր լինելուց բացի՝ ապահովելու է փոխկապակցվածություն, շարժունություն և ճկունություն, որոնք նպաստելու են գիտելիքի ազատ շրջանառությանը և միջմշակութային շփումներին, ինչը կարևոր է կրթական, գիտական և նորարարական-ստեղծարար գործունեության համար:

11. Ակադեմիական քաղաքի հայեցակարգը կյանքի կոչելու գործընթացը Հայաստանի Հանրապետությունն իրականացնելու է մասնակցային և բաց ընթացակարգերի միջոցով՝ ներգրավելով Հայաստանի, Սփյուռքի և արտերկրի լավագույն մասնագետներին և մասնագիտացված կառույցներին, որոնք ունեն որոշակի փորձառություն նմանատիպ համակարգերի նախագծման և կայացման հարցում:

12. Ակադեմիական քաղաքի ֆիզիկական տեղադիրքի համար նախատեսվում են երկու տեղամասեր՝ Երևան քաղաքի 17-րդ թաղամասին հարող տարածքը, որի գերակշռող մասը պետական կամ համայնքային սեփականություն է, և Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքը, որոնց գումարային մակերեսը կազմում է շուրջ 700 հա:

13. «Ակադեմիական քաղաք» ծրագրի մշակման, իրականացման, համակարգման և հետագա կառավարման մարմին է հանդիսանալու Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծված «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ):

14. Ակադեմիական քաղաքը կայանալու է Հայաստանի Հանրապետությունում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և պետական գիտական կազմակերպությունների հենքի վրա՝ դրանք ֆիզիկապես տեղափոխելով հատկացված տարածքներ և հզորացնելով առկա հետազոտական, կրթական ենթակառուցվածքները, ինչպես նաև համալրելով նոր ենթակառուցվածքներով:

15. Միաժամանակ, ակադեմիական քաղաքը բաց է լինելու նաև այն միջպետական և ոչ պետական բուհերի ու գիտական կազմակերպությունների համար, որոնք նպատակահարմար կգտնեն իրենց գործունեությունը կազմակերպել ակադեմիական քաղաքի շրջանակներում: Հայաստանի Հանրապետությունում կառավարությունը կխրախուսի նաև այդ կառույցների տեղափոխումը:



16. Ակադեմիական քաղաքի գործառնության ապահովման և կառավարման առանձնահատկությունները կամրագրվեն օրենսդրությամբ՝ ապահովելով դրա բնականոն գործառնությունը: Կիստակեցվեն նաև ակադեմիական քաղաքում բնակության, գործունեության ծավալման, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների հետ հարաբերություններին վերաբերող դրույթները:

## 2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

17. Սույն հայեցակարգի շրջանակներում ակադեմիական քաղաքը բաղկացած է լինելու չորս ակադեմիական կլաստերներից, որոնք կազմավորվելու են համապատասխան չորս խոշորացված համալսարանների և դրանց միավորված գիտա-հետազոտական մի շարք կազմակերպությունների հենքի վրա՝

- 1) Տեխնոլոգիական կլաստեր.
- 2) Արվեստների կլաստեր.
- 3) Կրթական կլաստեր.
- 4) Սպայական կլաստեր:

18. Ակադեմիական քաղաքի տարածքները նախատեսվելու են այն տրամաբանությամբ, որ հնարավորություն ունենան ֆիզիկապես տեղակայել մինչև 16 բուհ՝ օրենքով նախատեսված մինչև ութ պետական խոշորացված բուհ և մինչև ութ մասնավոր կամ միջազգային բուհ:

19. Ակադեմիական քաղաք են տեղափոխվելու նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, հիմնադրամը, ինչպես նաև ըստ նպատակահարմարության՝ ոլորտին առնչվող այլ պետական և մասնավոր կառույցներ:

20. Յուրաքանչյուր կլաստերի հզորությունը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով սովյալ կլաստեր տեղափոխվող կառույցներում ընդգրկված ուսանողների և աշխատակիցների առկա թվերը, որին ավելացվել է հզորության՝ մինչև կլաստերների գործարկումն ակնկալվող առնվազն 30% աճը:

### 3. ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

21. Տեխնոլոգիական կլաստերը նախատեսված է լինելու կրթական ծրագրերի մասով մոտ 14500 ուսանողի և 500 աշակերտի կրթական գործընթացը կազմակերպելու նպատակով: Կլաստերում կրթական, հետազոտական և փորձակոնստրուկտորական ծրագրերի իրականացման համար ներգրավված են լինելու շուրջ 3 000 ակադեմիական կազմի աշխատակիցներ, վարչական կազմի աշխատակիցների քանակությունը կհստակեցվի հայեցակարգային քննարկումների և նախագծման փուլում:

22. Տեխնոլոգիական կլաստերում կրթությունը, գիտահետազոտական աշխատանքները և նորարարական գործունեությունը հիմնականում իրականացվելու են կիրառական բնույթի հետազոտությունների և փորձակոնստրուկտորական աշխատանքների շուրջ՝ առանց անտեսելու հիմնարար կրթության և հետազոտությունների դերը:

23. Տեխնոլոգիական համալսարանը կազմավորվելու է Հայաստանում գործող տեխնոլոգիական ուղղվածության կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հիմքի վրա և հենված է լինելու այդ համալսարանների լավագույն ու կայացած համակարգերի վրա, ինչպես նաև ներառելու է ժամանակակից և ապագայում կարևորություն ներկայացնող նոր հետազոտական ուղղություններ և կրթական վերանայված ծրագրեր:

24. Տեխնոլոգիական կլաստերը միավորելու է նաև՝

- 1) Նյութագիտության և քիմիայի հետազոտությունների կենտրոնը<sup>1</sup>.
- 2) Ֆիզիկական հետազոտությունների կենտրոնը.
- 3) Առաջատար սարքաշինության նախատիպավորման և տեխնոլոգիաների կենտրոնը.
- 4) Գյուղատնտեսական հետազոտությունների և տեխնոլոգիաների կենտրոնը.
- 5) Հաշվողական տեխնոլոգիաների կենտրոնը:

<sup>1</sup> Այս և հետագայում կենտրոնների համար կիրառվող բոլոր անվանումները պայմանական են՝ նկարագրելու համար դրանց գործառնական առանձնահատկությունները: Վերջնական անվանումները հստակեցվելու են մասնագիտական քննարկումների արդյունքում:



25. Կենտրոնները կազմավորվելու են համապատասխան ուղղվածությունների գիտահետազոտական կազմակերպությունների հիմքի վրա՝ ըստ անհրաժեշտության վերանայելով ուղղությունները և համալրելով նոր ուղղություններով:

26. Առաջատար սարքաշինության նախատիպավորման և տեխնոլոգիաների կենտրոնը կհանդիսանա նոր կառուցվածք, որում գործունեությունը կծավալվի տեխնոլոգիական մշակումների և նորարարական լուծումների ուղղությամբ, որը կունենա նաև նախատիպավորման համար անհրաժեշտ նախաարտադրական ենթակառուցվածքներ (մեքենաշինական պարկ, փորձարկումների անգարներ/հարթակներ, նուրբ դետալների արտադրամասեր, աշխատախցեր), որոնց ամբողջական ցանկը պետք է հստակեցվի մասնագիտական քննարկումների արդյունքում: Կենտրոնն ապահովելու է մշակումների տեխնոլոգիական պատրաստվածության առնվազն 6-րդ մակարդակի հաղթահարումը:

27. Գյուղատնտեսական կրթությունը, ինչպես նաև հետազոտություններն ու մշակումներն իրականացվելու են ագրոտեխնոլոգիական ուղղվածության գերակայությամբ, ինչի նպատակով կլաստերի տարածքում տեղակայվելու են նաև ջերմոցներ, ինտենսիվ այգի, գինեգործական փորձարարական կայան, մեքենատրակտորային պարկ/անգարներ, փորձարարական վարելահողեր, անասնաֆերմա, կաթնամթերքների փորձարարական գործարան, կերային արտադրություն, ջրային ավազան, փորձարարական նպատակներով օգտագործվող այլ հողատարածքներ: Ելնելով բնակլիմայական տարբեր գոտիականություններում հետազոտությունների և կրթության կազմակերպման անհրաժեշտությունից (հատկապես ագրոպարենային ոլորտում)՝ ակադեմիական քաղաքին կպատկանեն նաև ուսումնական գյուղատնտեսական նշանակության տարածքներ նաև հանրապետության այլ գոտիներում:

28. Տեխնոլոգիական կլաստերում նախատեսվելու է նաև ստարտափների համալսարանական ինկուբատորը, որը համալսարանական հետազոտությունների և առևտրայնացման պոտենցիալ ունեցող մշակումների հիման վրա ձևավորված սկսնակ կազմակերպություններին հատուկ պայմաններով կտրամադրի աշխատանքային տարածքներ՝ իրենց կայացման առաջին փուլերը հաղթահարելու ժամանակահատվածում: Սրան զուգահեռ, համալսարանը կապահովի նաև վարչարարական



բեռի թեթևացման և համապատասխան հավելյալ հմտությունների զարգացման գծով աջակցություն:

29. Այս իմաստով տեխնոլոգիական կլաստերն առաջացնելու է ինչպես սեփական մշակումներից եկամուտ, այնպես էլ համագործակցելու է մասնավոր սեկտորի կազմակերպությունների հետ՝ որպես մտավոր կապիտալի և խոշոր սարքավորումների ռեսուրս:

30. Նույն կլաստերում տեղակայվելու է նաև Տեխնոլոգիական ավագ դպրոցը, որում ավագ դասարանների համար կիրականացվի բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) և, մասնավորապես, տեխնոլոգիական խորացված ուղղվածությամբ կրթական ծրագիր, դպրոցի համար հասանելի կլինեն նաև կլաստերի համապատասխան ենթակառուցվածքները՝ նախագծային ուսումնառության բաղադրիչի իրականացման համար: Դպրոցի աշակերտների համար ևս կնախատեսվի կացարանային գոտի:

31. Արվեստների կլաստերը նախատեսված է լինելու կրթական ծրագրերի մասով մոտ 2 000 ուսանողի և 200 աշակերտի կրթական գործընթացը կազմակերպելու նպատակով: Կլաստերում կրթական և հետազոտական ծրագրերի իրականացման համար ներգրավված են լինելու շուրջ 900 ակադեմիական կազմի աշխատակիցներ, իսկ վարչական կազմի աշխատակիցների քանակությունը կհստակեցվի հայեցակարգային քննարկումների և նախագծման փուլում:

32. Արվեստների համալսարանը կազմվելու է ներկայումս Հայաստանում գործող արվեստի բուհերի հիմքի վրա, ընդ որում, դրան կարող են մաս կազմել նաև մշակութաբանական կրթական ծրագրերը:

33. Արվեստների կլաստերը միավորելու է նաև՝

1) Մշակույթի, ժառանգության և արվեստների կենտրոնը՝ կազմավորված ոլորտի գիտահետազոտական կենտրոնների և ինստիտուտների հիմքի վրա.

2) Արվեստների ավագ դպրոցը, որտեղ աշակերտներին կմատուցվի արվեստների խորացված ուղղվածությամբ կրթական ծրագիր, ինչպես նաև աշակերտներին հասանելի կլինեն կլաստերի բոլոր ենթակառուցվածքները.

3) Ժամանակակից տրանսֆորմեր թատրոն-կինոթատրոն-համերգասրահը, որը ծառայելու է թե՛ իբրև ուսումնական միջավայր, թե՛ իբրև թատերական ներկայացումների, կինոդիտումների, համերգների կազմակերպման արդիական հագեցված տարածք, ընդ որում, հաշվի առնելով ներկայումս ժամանակակից համերգասրահի խիստ պակասը՝ նախատեսվում է, որ նոր կառուցվող բազմաֆունկցիոնալ համալիրը կծառայի որպես ֆիլիարմոնիկ և սիմֆոնիկ նվագախմբերի համար հիմնական համերգային հարթակներից մեկը.

4) Հայաստանի ազգային թանգարան-պահոցը, որը հանդիսանալու է ինչպես ժամանակակից ցուցասրահ, որի գիտական ողջ ապահովումն իրականացնում է Մշակույթի, ժառանգության և արվեստների կենտրոնը, այնպես էլ Հնագիտական գտածոների և նյութերի արխիվ-պահոց.

5) աշխատանոցներ/արվեստանոցներ, որոնք արվեստի բնագավառի երիտասարդ մասնագետների համար կհանդիսանան անհատական կարիերայի կամ փորձարարական գաղափարների մեկնարկի հարթակներ, որոնք կտրամադրվեն որոշակի ժամանակահատվածով և արտոնյալ պայմաններով՝ մինչև գաղափարի կայանալը:

34. Արվեստների համալսարանի կազմում նախատեսվում է նաև միջին մասնագիտական կրթության ծրագրերի ներառում՝ ուղղված կինոյի և այլ ոլորտներում անհրաժեշտ կադրերի պատրաստմանը:

35. Արվեստների կլաստերի տարածքում հնարավոր է նաև կինոքաղաքի նախատեսում, որը տարբեր ժամանակաշրջանների ոճով կառուցված ու կինոարտադրության միջավայր ծառայող շենքերի, փողոցների և ազգագրական գյուղակի համախումբ է: Բացի կինոարտադրությունից՝ այն կընձեռի նաև որոշակի զբոսաշրջային հնարավորություններ:

36. Կրթական կլաստերը նախատեսված է լինելու կրթական ծրագրերի մասով մոտ 15 000 ուսանողի կրթական գործընթացը կազմակերպելու նպատակով: Կլաստերում կրթական և հետազոտական ծրագրերի իրականացման համար ներգրավված են լինելու շուրջ 1 400 ակադեմիական կազմի աշխատակիցներ, իսկ վարչական



կազմի աշխատակիցների թվաքանակը կհատակեցվի հայեցակարգային քննարկումների և նախագծման փուլում:

37. Կրթական համալսարանը կազմավորվելու է ներկայումս գործող համապատասխան ուղղվածության բուհերի և կրթական ծրագրերի հիման վրա: Ընդ որում, նախատեսվում է, որ կրթական համալսարանում էապես վերափոխվելու են ծրագրերը՝ կրթության ոլորտի արդիական տարրեր մասնագիտություններով ուսուցումն ապահովելու համար, ինչպես օրինակ՝ կրթական տեխնոլոգիաները, գնահատումը և հետազոտությունները:

38. Կրթական կլաստերի մեջ մտնելու է նաև կրթական հետազոտությունների կենտրոնը, որը նորովի կազմավորվող հետազոտական կառույց է՝ ոլորտում անհրաժեշտ գիտական հետազոտությունների իրականացման, ինչպես նաև միջազգային մակարդակի փորձագիտական ներուժի ձևավորման համար:

39. Սպայական կլաստերի կառուցվածքը և հզորությունը կհատակեցվեն մասնագիտական քննարկումների արդյունքում:

40. Սպայական համալսարանը նախատեսված է միասնական տրամաբանությամբ և ծառայության վերաբերյալ որոշակի միասնական սկզբունքների շուրջ կրթական գործընթացի կազմակերպման համար: Այն կունենա երկու բաղադրիչ (ֆակուլտետ, դպրոց կամ այլ կազմակերպական ձև)՝ արտաքին անվտանգային և ներքին անվտանգային:

41. Ըստ անհրաժեշտության, Սպայական համալսարանում ներդրվելու են նաև նոր և թարմացված կրթական ծրագրեր՝ համագործակցելով միջազգային գործընկեր համալսարանների հետ:

42. Արտաքին անվտանգային բաղադրիչը կազմավորվելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող և բարձրագույն կրթություն իրականացնող համալսարանների լավագույն և կայացած համակարգերի վրա. գործունեությունը միտված է լինելու ռազմական ոլորտի, արտաքին անվտանգությունն ապահովող սպայական և այլ կազմի ուսուցմանը և հետազոտությունների իրականացմանը:



43. Ներքին անվտանգային բաղադրիչը կազմված է լինելու ներքին անվտանգային համակարգերի համար կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների հիմքից, ինչպես ոստիկանության և ճգնաժամային կառավարման ոլորտներն են, և զբաղվելու է ներքին անվտանգային խնդիրները սպասարկող սպայական կազմի և մասնագետների պատրաստմամբ (ոստիկաններ, փրկարարներ, փորձագետներ և այլն):

44. Սպայական կլաստերում գործելու են նաև Սպայական ավագ դպրոցը և քոլեջը:

45. Նույն կլաստերը կարող է միավորել նաև՝


- 1) Կրիմինալիստիկայի և դատափորձագիտության հետազոտական կենտրոնը.
- 2) Երկրաբանության և դիսկերի գնահատման կենտրոնը:

46. Բոլոր կլաստերները հնարավորինս համապատասխանելու են համընդհանուր դիզայնի սկզբունքներին և ապահովելու են առավելագույն ներառականություն:

#### 4. ՏԵՂԱՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

47. Ակադեմիական քաղաքի կառուցման համար դիտարկվում է երկու տեղամաս՝

- 1) Տեղամաս 1 - ք. Երևանի 17-րդ թաղամասի տարածքը (Հիմնական տեղամաս),
- 2) Տեղամաս 2 - Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքը (Պահեստային տեղամաս):



48. Ճանապարհային ցանց. Նախատեսվող տեղամասերը հարում են միջպետական M1 մայրուղուն: Ակադեմիական քաղաքը մայրաքաղաքին է կապվելու նաև երկաթգծով, որի մի մասն արդեն իսկ անցնում է Հիմնական տեղամասով: Նախատեսվում է, որ ակադեմիական քաղաքի ներսում տեղաշարժը կունենա հատուկ կարգավորում՝ կազմակերպելով հեծանիվներով, էլեկտրական տրանսպորտով և այլ եղանակներով:

49. Բնակելի ֆոնդ. ակադեմիական քաղաքի չորս կլաստերներում և հարակից տարածքներում նախնական հաշվարկով աշխատելու և բնակվելու է մոտ 44 000 մարդ, որոնց մի մասին կամպուսային տարածքներում անհրաժեշտ է լինելու ապահովել կա՛մ հանրակացարանային տարածքով (ուսանողներ, կրտսեր հետազոտողներ և դասախոսներ), կա՛մ ծառայողական բնակարաններով (հիմնական դասախոսներ և ավագ մակարդակի հետազոտողներ):

50. Հաշվի առնելով, որ կլաստերների աշխատակիցների մի մասը ցանկություն կունենա ձեռք բերել սեփականության իրավունքով բնակարաններ, անհրաժեշտ կլինի նաև աշխատակիցների համար կազմակերպել տեղամասերին մերձակա տարածքներում հիփոթեքային վարկավորման հատուկ պայմաններ:

51. Կլաստերների գոյությունն անխուսափելիորեն հանգեցնելու է նաև հարակից համայնքային տարածքների զարգացմանը և տնտեսական գործունեության նոր տեսակների ծավալմանը: Հարևանությամբ գտնվող համայնքային կամ մասնավոր սեփականության հողերի վրա անկանոն շինարարությունից խուսափելու նպատակով



ձևավորվելու է նաև ավելի ծավալուն տարածքի զարգացման պլան, որը կկարգավորի մերձակայքում շինարարության հարկայնությունը, դիզայնը, ինչպես նաև գործունեության տեսակները:

52. Քանի որ տեղամասերից ոչ մեկը նախատեսված չէ կլաստերների համապատասխան քանակությամբ մարդկանց միաժամանակյա գործունեության համար, անհրաժեշտություն է առաջանալու կառուցել/ստեղծել կամ արդիականացնել բոլոր ենթակառուցվածքները՝

- 1) էլեկտրահաղորդման և կապի համակարգեր.
- 2) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր.
- 3) գազատարների և ջերմամատակարարման համակարգեր.

4) աղբահանության համակարգ:

53. Կառուցվելու են նոր ենթակառուցվածքներ՝

1) ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների և այլ արտադրական և փորձարարական կենտրոնների շենքային ենթակառուցվածքներ.

2) հանրակացարանային կամ բնակելի թաղամաս՝ ուսանողների և դասախոսների համար.

3) բազմաֆունկցիոնալ տրանսֆորմեր համերգասրահ (համերգասրահ, կինոթատրոն, թատրոն).

4) տարբեր մարզաձևերի համար նախատեսված դահլիճներ՝ բուհական սպորտային ակումբների գործունեության, ինչպես նաև ակադեմիական քաղաքի բնակիչների և աշխատակիցների առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ կենսապայմանների կազմակերպման համար՝ մարզասրահներ, լողավազաններ.

5) ջրային զանգվածներ.

6) տրանսպորտային համակարգ.

7) ավտոկայանատեղիներ.

8) առևտրային և սննդի կետեր.

9) բուժհաստատություններ, առողջության կենտրոններ.

10) երեխաների խնամքի և զարգացման կենտրոններ.

11) անվտանգության արդիական համակարգ.



12) այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

54. Ակադեմիական քաղաքի հիմնական տեղամասում կառուցվելու է նաև ազգային ստադիոն՝ անհրաժեշտ հարակից ենթակառուցվածքներով, ստադիոնի տարողունակությունը նախատեսվելու է մինչև 35 000 հանդիսատեսի համար: Ստադիոնի ենթակառուցվածքները (ավտոկայանատեղիներ, լողավազաններ, մարզասրահներ) մրցաշարերից կամ այլ միջոցառումներից ազատ ժամանակահատվածում օգտագործվելու են կլաստերների կարիքների համար:

55. Նախատեսվում է, որ ակադեմիական քաղաքը կհյուրընկալի նաև ոչ պետական կամ միջպետական բուհեր, ինչի համար նախագծման փուլում հիմնական տեղամասում, ըստ հնարավորության կնախատեսվեն որոշակի ազատ գոտիներ՝ տեղափոխման կամ կառուցման ցանկություն ունեցող բուհերի համար:

56. Կլաստերների նախագծման և կառուցման փուլում նախատեսվում են մի քանի հանգուցային կառույցներ, որոնք հանդիսանալու են ծրագրի այցեքարտը: Դրանք ունենալու են յուրահատուկ ճարտարապետական հորինվածք և բացի ֆունկցիոնալ նշանակությունից՝ լինելու են նաև տվյալ միջավայրի ոճը պայմանավորող դոմինանտ շինությունները:

57. Հանգուցային կառույցների ճարտարապետությունն ամբողջությամբ իրականացվելու է միջազգային գործընկերոջ կողմից:

58. Ներկա դրությամբ, որպես հանգուցային կառույցներ նախատեսվում են՝

1) բազմաֆունկցիոնալ տրանսֆորմեր համերգասրահը.

2) չորս կլաստերների կենտրոնական մասնաշենքերը.

3) ազգային ստադիոնը:

59. Ցանկը հետագայում կհամալրվի գլխավոր հատակագծի մշակմանը զուգընթաց, որտեղ արդեն պարզ կդառնան այն հավելյալ շինությունները, որոնց համար կարիք կա հեղինակային ճարտարապետության:

60. Մնացյալ շինությունների ճարտարապետությունն իրականացվելու է գործընկերոջ հսկողությամբ և տեղական ներուժով՝ ներգրավելով այդ թվում ուսանողական համայնքը, ինչը նաև կդառնա անփոխարինելի կենսափորձ ապագա ճարտարապետների համար:

## 5. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

61. Նախորդող ժամանակահատվածում (2023 թվականի մարտ-հունիս) ծրագրի պատասխանատու մարմինների կողմից կատարվել են մի շարք նախապատրաստական աշխատանքներ: Նախնական խոշորացված արժեքներով գնահատվել են ընդհանուր կարիքները՝ զուգահեռ ուսումնասիրելով նմանօրինակ ծրագրերի իրականացման միջազգային փորձը: Համագործակցության նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել միջազգային հեղինակավոր ճարտարապետական (gmp Architekten) և կառուցապատող (NUSSLI) ընկերությունների հետ, իսկ Արվեստների կլաստերի բովանդակության և կառուցվածքի մշակման համար՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Լոնդոնի Արվեստների համալսարանի (University of the Arts London) հետ: Բանակցություններ են տարվել միջազգային գործընկեր այլ կազմակերպությունների հետ՝ բովանդակային աջակցություն ստանալու համար, և ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ:

62. Ակադեմիական քաղաքի կառուցման ժամանակացույցը կազմված է երեք հիմնական փուլերից՝

- 1) նախագծման փուլ.
- 2) կառուցման փուլ.
- 3) սպասարկման փուլ:

63. Նախագծման փուլը նախատեսվում է մեկնարկել 2023 թվականի հոկտեմբեր ամսվանից և ավարտին կհասնի 2025 թվականի սեպտեմբեր ամսին: Այս փուլում նախատեսվող աշխատանքներն են՝

- 1) կարիքների գնահատում.
- 2) շահառուների հետ քննարկում.
- 3) տեխնիկական առաջադրանքի մշակում.
- 4) տարածքների իրավական կարգավիճակի հստակեցում և իրավունքների պետական գրանցման կատարում.



5) երկրատեխնիկական հանութագրման, տարածքի հանութագրման և սխեմայի մշակման, տարածքի եռաչափ մոդելավորման և այլ ուսումնասիրությունների իրականացում.

6) տարածքի գլխավոր հատակագծի մշակում.

7) ճարտարապետաշինարարական նախագծի մշակում.

8) տեխնիկական փորձաքննությունների անցկացում (պարզ/համալիր).

9) պահանջվող եզրակացությունների և թույլտվությունների ստացում.

10) ճանապարհների և լրացուցիչ ենթակառուցվածքների նախագծում.

11) տարածքի զարգացման պլանի մշակում:

64. Կառուցման փուլը հանդիսանում է ծրագրի առավել տևական փուլը, այն նախատեսվում է մեկնարկել 2025 թվականի հոկտեմբեր ամսվանից և նախնական գնահատմամբ կավարտվի 2029 թվականի դեկտեմբեր ամսին: Այս փուլում նախատեսվող աշխատանքներն են՝

1) գլխավոր հատակագծի համաձայն՝ ճանապարհների և ենթակառուցվածքների կառուցում.

2) գլխավոր նախագծի համաձայն՝ կանաչապատ տարածքների տնկարկում և խնամք.

3) տարածքով անցնող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի, մայրուղային գազատարների և ջրատարների տեղափոխում.

4) հիմնական շենքային/ենթակառուցվածքային ֆոնդի կառուցում.

5) մասնավոր ներդրողների կողմից ենթակառուցվածքների կառուցում:

65. Կառուցման փուլը, ըստ հնարավորության, պլանավորվելու է այնպես, որ միջանկյալ ժամանակահատվածներում ունենանք կլաստերների, դրանց բաղադրիչների կամ հանգուցային կառույցների փուլային հանձնում:

66. Սպասարկման փուլը ողջ ծավալով կսկսվի 2030 թվականի հունվար ամսվանից, այսինքն՝ կառուցման փուլի ավարտից հետո, սակայն մասամբ՝ կախված կառուցման ընթացքում որոշակի փուլերի ավարտից, կկազմակերպվի արդեն հանձնված ենթակառուցվածքների սպասարկումը: Այս փուլում նախատեսվող աշխատանքներն են՝



- 1) տարածքների կոմունալ սպասարկում.
- 2) ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքների աշխատանքի համակարգում.
- 3) տրանսպորտային կապի համակարգում.
- 4) անվտանգության ապահովում.
- 5) ընթացիկ բարեկարգումներ և սպասարկում:

## 6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

67. «Ակադեմիական քաղաք» ծրագիրն իրականացվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 351-Լ որոշմամբ, որի N 1 հավելվածի Նպատակ 2-ի 2.2.2-րդ կետով նախատեսված է 2030 թվականին ստեղծել ակադեմիական քաղաքը՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ:

68. Ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրն են հանդիսանալու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, ինչպես նաև միջազգային գործընկեր ֆինանսական և ներդրումային կառույցների ներդրումային կամ վարկային միջոցները:

69. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման աշխատանքներ» բյուջետային նոր ծրագրի ներքո, որը կունենա «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի պահպանության և ընթացիկ ծախսերի գծով միջոցառում և նախագծման ու կառուցման ուղղությամբ կապիտալ բնույթի միջոցառում:

70. Կացարանային, բնակելի, սպորտային և կենցաղային այլ նպատակներով ֆոնդի կառուցման կամ կառավարման համար կներգրավվեն նաև մասնավոր հատվածից ներդրողների միջոցներ՝ որոշակի պայմաններով՝ գլխավոր հատակագծին

համապատասխանելու և ապագայում քաղաքի ներդաշնակությունը չխաթարելու համար:

## 7. ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

71. «Ակադեմիական քաղաք» ծրագրի կայացման համար անհրաժեշտ են միջազգային գործընկերներ, ինչպես ներդրումների և մոնիթորինգի մասով, այնպես էլ բովանդակային բաղադրիչի կայացման համար: Սա նաև հանդիսանում է ծրագրի կայունության և որակի ապահովման գործիք: Միջազգային գործընկեր կառույցների ներգրավումը կնպաստի ծրագրի ընթացքն առավելագույնս մասնակցային դարձնելուն և հետագայում ստեղծված կլաստերների միջազգային ընկալելիության բարձր մակարդակ ապահովելուն:

72. Ներկայումս բանակցություններ և նախապատրաստական աշխատանքներ են ընթանում միջազգային ֆինանսական և խորհրդատվական հաստատությունների հետ՝ տարբեր բնույթի ծրագրերի նախապատրաստման համար, որոնք կապված են ինչպես բուհական համակարգի բովանդակային և կառավարչական բարեփոխումների, այնպես էլ «Ակադեմիական քաղաք» ծրագրի կայացման հետ:

73. Արվեստների կլաստերի կայացման հարցում կա նախնական համաձայնություն Լոնդոնի Արվեստների համալսարանի հետ (University of the Arts London), որը միջազգային ռեյտինգային համակարգերում զբաղեցնում է բավականին բարձր դիրքեր և հայտնել է իր պատրաստականությունն աջակցելու Արվեստների կլաստերի բովանդակային կայացմանը: Որպես միջնորդ գործընկեր ներգրավվել է նաև Բրիտանական Խորհրդի Հայկական գրասենյակը, որն առաջիկայում կկազմակերպի առաջին մասնագիտական այցելությունը:

74. Նմանատիպ համագործակցություններ են հաստատվելու նաև մնացած կլաստերների՝ փոխադարձ հետաքրքրության հենքով ներգրավելով աշխարհի լավագույն բուհերին:



## 8. ԸՆԹԱՑՔԸ

75. «Ակադեմիական քաղաք» ծրագրի ընթացքը նախատեսված է ժամանակացույցով և ենթակա է պարբերական վերանայման՝ կախված փոխկապակցված գործընթացների հնարավոր տեղաշարժերից:

76. Ակադեմիական քաղաքի կառուցումն ու կայացումը չեն խոչընդոտելու գործող բուհական և գիտական համակարգի զարգացմանը, ինչը նշանակում է, որ ռազմավարական փաստաթղթերից և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից բխող որևէ ընթացիկ բովանդակային կարևորության ծրագիր չի դադարեցվելու:

77. Տեղափոխման ենթակա բոլոր կազմակերպություններն իրենց աշխատանքները շարունակելու են գոյություն ունեցող ֆիզիկական ենթակառուցվածքներում մինչ այն պահը, երբ կլաստերներում արդեն հանձնված կլինեն համապատասխան ենթակառուցվածքները (բացառություն կարող են կազմել հնամաշ և վթարային պայմաններում գործունեություն ծավալող, ցածր արդյունավետությամբ կազմակերպությունները, որոնք ընթացքում կմիավորվեն հետազոտություններով կամ ծրագրերով մոտ կազմակերպությունների հետ):

78. Տեղափոխումից հետո Երևան քաղաքում ազատված անշարժ գույքն ըստ նպատակահարմարության և հնարավորության ծառայելու է ակադեմիական քաղաքում զարգացման և այլ բնույթի ծրագրերի իրականացման համար:

79. Գործընթացին զուգահեռ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հրավիրել է Հայաստանի Հանրապետության պետական բուհերին և գիտահետազոտական կազմակերպություններին ներկայացնելու հայեցակարգային առաջարկություններ օրենքով նախատեսված Հայաստանի Հանրապետության պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի վերաբերյալ, ինչը սերտորեն առնչվում է «Ակադեմիական քաղաք» ծրագրին: Այս գործընթացի արդյունքում ձևակերպվելու են նաև բուհական և հետազոտական



համակարգի խոշորացման վերաբերյալ մասնագիտական հայեցակարգային մոտեցումները, որոնց հիման վրա կմշակվի խոշորացման ընդհանուր դրույթային բազան:

80. Քանի որ «Ակադեմիական քաղաք» ծրագիրն իր մասշտաբով հանդիսանում է նորոյթ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ, ապա այս համակարգի կառավարման և բովանդակային կայացման համար կառուցմանը զուգընթաց կազմակերպվելու են ինչպես ակադեմիական համակազմի, այնպես էլ ադմինիստրատիվ կազմի վերապատրաստումներ գործընկեր համալսարաններում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
**ՆԱԽԱՐԱՐ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,  
КУЛЬТУРЫ И СПОРТА  
**МИНИСТР**  
REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,  
CULTURE AND SPORT  
**MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Փաքս/факс/fax (374 10) 52 73 43,  
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

N----- «-----» ----- 2022 թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

*Ի կապարումն ՀՀ վարչապետի  
աշխատակազմի ղեկավարի 14.11.2022 թ.  
N 02/05.1/37213-2022 հանձնարարականի*

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1.2/4599-2022 գրությամբ ներկայացված՝ Արագածի Գիտական Կենտրոնի (ԱԳԿ) հետագա ճակատագրի առնչությամբ հարցի՝ հայտնում եմ, որ գրությամբ ներկայացված հարցը բազմիցս քննարկվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում և ՀՀ գերատեսչություններում (Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Էկոնոմիկայի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Ֆինանսների նախարարություններ): ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյանի գրության և Արևիկ Սարգսյանի՝ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանին հասցեագրած նույնաբովանդակ դիմումի շրջանակներում բարձրացված հարցերը քննարկվել են ևս մեկ անգամ:

Քննարկումների արդյունքով Արևիկ Սարգսյանին պատասխանվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թոշունյանի 04.11.2022 թ. թիվ 05/11.1/28013-2022 գրությամբ (կցվում է): Դիմումում բարձրացված հարցերի

վերաբերյալ ներկայացվել է հանգամանալից պարզաբանում՝ կցելով հարցերին առնչվող  
անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը:

Առդիր՝ 1 նիշք:

Հարգանքով՝

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,  
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION,  
SCIENCE, CULTURE AND SPORT

DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,  
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

No \_\_\_\_\_

2022 թ.

« \_\_\_\_\_ »  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ  
Քաղաքացիների ընդունելության  
և նամակների բաժնի պետ  
Ինեսա Միրզոյանին

Հարգելի՛ տիկին Միրզոյան,  
Ի պատասխան 2022 թ. սեպտեմբերի 5-ի Ձեր N 1.15/3676-2022 գրության՝  
հայտնում ենք, որ ս/թ սեպտեմբերի 2-ին ԿԳՄՍ աշխատակիցները շրջայց են կատարել  
ՌԳՀԻ Արագածի գիտական կենտրոնի համալիր:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ գիտական կենտրոնի տարածքում նորահայտ  
հուշարձանների կարգավիճակ ունեցող որևէ օբյեկտի վնասման կամ խաթարման  
փաստ չի արձանագրվել:

Տեղեկացնում ենք, որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու  
պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 20-րդ  
հոդվածի համաձայն՝ նորահայտ հուշարձանները մինչև հուշարձանների պետական  
ցուցակում ընդգրկվելը պահպանվում են պետության կողմից օրենսդրությամբ  
սահմանված կարգով, և նկատի ունենալով, որ հիշյալ նորահայտ հուշարձանները  
հանձնվել են «Ստանդարտացման և չափազրության ազգային մարմին» ՓԲԸ-ին՝ ուստի  
նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ որպես սեփականատեր՝ ՓԲԸ-ն պարտավոր է  
ապահովել հուշարձանի անվթարությունը:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի  
պահպանության և օգտագործման մասին օրենքի համաձայն նախարարությունը  
օրենքով սահմանված կարգով սեփականատիրոջից պահանջել է փառատոնի  
շրջանակներում իրականացվելիք աշխատանքների նախագիծ, որն ստանալուն պես  
նախարարությունը կներկայացնի իր դիրքորոշումը:

Հարգանքով՝

ԱԼՖՐԵԴ ՔՈԶԱՐՅԱՆ

ՊՄՀՊ վարչություն  
Կատ՝ փորձագետ Կատյա Բարսեղյան  
Հեռ. 093 41 60 47

Կատարող՝ Գույքի կառավարման բաժին  
Սոնա Կիրակոսյան  
հեռ. 010 599664

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,  
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА  
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**  
REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION,  
SCIENCE, CULTURE AND SPORT  
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,  
0010, Երևան, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N-----

«-----» -----2022 թ.

## **ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

### **Հարգելի՛ Արևիկ Սարգսյան,**

Ի պատասխան Ձեր՝ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանին հասցեագրած դիմումի՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում և ՀՀ գերատեսչություններում (ԲՏԱՆ, ԷՆ, ԿԳՄՍ, ՏԿԵՆ, ՖՆ) բազմիցս կազմակերպվել են քննարկումներ Հերոնու հայելային դիտակը (ՌՕԴ-54/2,6) գործարկելու հնարավորության, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում «Հերոնու ազգային տիեզերական կենտրոն» ձևավորելու, գիտական կենտրոնի տարածքում միջոցառումներ կազմակերպելու, հուշարձանների պահպանության, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ իրավախախտումների և մասնագիտական աշխատանքներին խոչընդոտելու առնչությամբ:

Մասնավորապես, 2015 թվականին ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2015 թվականի ապրիլի 14-ի № 10 Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի անդամները քննարկել են ՌՕԴ-54/2,6-ի վերականգնման, ռադիոաստղագիտության, կապի ու կառավարման համակարգերի, ռադիոչափումների և գիտաարտադրական ծառայությունների այլ հարակից ոլորտների առկա ու հեռանկարային խնդիրների լուծման հնարավորությունները: Տեղում ուսումնասիրելով դիտակի, դրա շուրջ ձևավորված ենթակառուցվածքի, հարակից շինությունների ու տարածքի վիճակը՝ տվել են մասնագիտական եզրակացություն (կցվում է), համաձայն որի՝ ՌՕԴ-54/2,6-ի կիրառմամբ

**գիտության ժամանակակից խնդիրներ լուծել հնարավոր չէ**, իսկ դիտակը շահագործման վիճակի բերելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության համար նախատեսվող միջոցներից հատկացնելն իրատեսական չէ: Առաջարկվել է ՌՕԴ-54/2.6 ռադիոդիտակի և նրա շուրջ եղած ենթակառուցվածքի բազայի հիման վրա մշակել գիտակրթական կենտրոնի ձևավորման և գիտական տուրիզմի զարգացմանն ուղղված համատեղ բիզնես-ծրագիր՝ միջազգային կամ այլ ներդրումային համագործակցության շրջանակներում իրականացնելու նպատակով:

Այնուհետև, 2019 թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի մոտ տեղի ունեցած քննարկման ընթացքում ոլորտի մասնագետները Ձեր ներկայությամբ մեկ անգամ ևս մանրամասն **հիմնավորել և հաստատել են** «Հերոնու ազգային տիեզերական կենտրոն» ստեղծելու և ՌՕԴ-54/2.6 **դիտակի վերագործարկման աննպատակահարմարության** վերաբերյալ վերոնշյալ աշխատանքային խմբի եզրակացությունը:

Հարցը 2022 թվականի ապրիլի 5-ին քննարկվել է նաև ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի բյուրոյի ընդլայնված նիստում՝ հրավիրված մասնագետների մասնակցությամբ, որի արդյունքում ՀՀ ԳԱԱ մասնագետները մնացել են նույն կարծիքին՝ նոր հանձնաժողովների աշխատանքներում իրենց մասնակցությունը նպատակահարմար չհամարելով:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասնագետները ՌՕԴ-54/2.6-ի արդիականացումը և շահագործման իրականացումը գիտական տեսակետից **շարունակում են համարել ոչ նպատակահարմար**՝ հարցի վերաբերյալ տարբեր ձևաչափերով անցկացված բազմաթիվ քննարկումների արդյունքում վերոնշյալ աշխատանքային խմբի եզրակացությունը լիարժեք և օբյեկտիվ համարելով (կցվում է):

Սույն թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասնագետների կողմից կատարվել է շրջայց ՌԳՀԻ Արագածի գիտական կենտրոնի համալիր: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գիտական կենտրոնի տարածքում նորահայտ հուշարձանների կարգավիճակ ունեցող որևէ **օբյեկտի վնասման կամ խաթարման փաստ չի արձանագրվել** (կցվում է):

## ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԿԱՐԵՆ ԹՌՉՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan  
Tel.: +37410 527031  
Fax: +37410 569281  
E-mail: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Website: [www.sci.am](http://www.sci.am)

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24  
Հեռ.՝ +37410 527031  
Ֆաքս՝ +37410 569281  
Էլ.փոստ՝ [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Ինտ.կայք՝ [www.sci.am](http://www.sci.am)

0019. Ереван, пр. Маршала Баграмяна, 24  
Тел.: +37410 527031  
Факс: +37410 569281  
Эл.почта: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Веб-сайт: [www.sci.am](http://www.sci.am)

№ 24-02/341

«08» սեպտեմբերի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ  
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան


Ի պատասխան Ձեր առ 02.09.2022թ. №02/05.1/28815-2022 գրությանը, ակադեմիկոս Պ.Հերոնու ՌՌԴ 54/2.6 ռադիոսպտիկական դիտակի վերաբերյալ հայտնում եմք, որ բարձրացված հարցը ՀՀ ԳԱԱ փորձագետների մասնակցությամբ բազմիցս քննարկվել է տարբեր ձևաչափերով:

Ձևավորված եզրակացությունը կայանում է հետևյալում, որ ռադիոդիտակի արդիականացումը և շահագործման իրականացումը գիտական տեսակետից նպատակահարմար չէ:

ՀՀ ԳԱԱ վերջին երեք եզրակացությունները կցված են /4 էջի տեսքով/:

✓ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս՝  Ա.Ս.Սաղյան

Կապարող՝  
Նարինե Դավիդյան  
Հեռ.՝ 524-780



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan  
Tel.: +37410 527031  
Fax: +37410 569281  
E-mail: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Website: [www.sci.am](http://www.sci.am)

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24  
Հեռ.՝ +37410 527031  
Ֆաքս՝ +37410 569281  
Էլ.փոստ՝ [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Ինտ.կայք՝ [www.sci.am](http://www.sci.am)

0019. Ереван, пр. Маршала Баграмяна, 24  
Тел.: +37410 527031  
Факс: +37410 569281  
Эл.почта: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Веб-сайт: [www.sci.am](http://www.sci.am)

№ \_\_\_\_\_  
“13” փետրվարի 2020թ.

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Ս.ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայոցյան

Ի պատասխան Ձեր N9/9.1.1/[323417]-20 առ 03.02.2020թ. «Հայաստանի իրավագործություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Աշոտ Ասլանյանի՝ ՀՀ ԳԿ նախագահին ուղղված գրության վերաբերյալ հայտնում եմ, որ 2019թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար պ-ն Ա.Հարությունյանը կազմակերպել է առաջարկվող նախագծի մասնագիտական քննարկում: Մասնակիցների ճնշող մեծամասնությունը բացասական են արտահայտվել և կողմ են եղել ԳՊԿ-ի աշխատանքային խմբի 2015թ. կայացրած որոշմանը:

Նշենք, որ հարցի 03.12.2019թ. քննարկման մասին պ-ն Ա.Ասլանյանը իր 31.01.2020թ. գրության մեջ չի հիշատակում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս՝

Ռ.Մ.Մարտիրոսյան

Կատարող՝  
Ն. Դավիդյան  
Հեռ.՝ 524-780



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan  
Tel.: +37410 527031  
Fax: +37410 569281  
E-mail: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Website: [www.sci.am](http://www.sci.am)

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24  
Հեռ.՝ +37410 527031  
Ֆաքս՝ +37410 569281  
Էլ.փոստ՝ [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Ինտ.կայք՝ [www.sci.am](http://www.sci.am)

0019. Ереван, пр. Маршала Баграмяна, 24  
Тел.: +37410 527031  
Факс: +37410 569281  
Эл.почта: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Веб-сайт: [www.sci.am](http://www.sci.am)

№ \_\_\_\_\_  
«22» հոկտեմբերի 2021թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
Գործադիր տնօրեն Աշոտ Ասլանյանին

Հարգելի պարոն Ասլանյան,

Ի պատասխան Ձեր գրությանը առ 25.08.2021թ. հայտնում եմք, որ բարձրացված հարցը բազմիցս քննարկվել է տարբեր ձևաչափերով:

Վերջին մասնագիտական քննարկումը տեղի է ունեցել 2019թ.-ի դեկտեմբերի 3-ին ԿԳՄՍ նախկին նախարար պրն. Ա.Հարությունյանի նախաձեռնությամբ: Մասնակիցների ճնշող մեծամասնությունը բացասական է արտահայտվել և կողմ եղել ԳՊԿ-ի աշխատանքային խմբի 2015թ. կայացրած որոշմանը:

ՀՀ ԳԱԱ մասնագետները մնում են նույն կարծիքին և նպատակահարմար չեն համարում նոր քննարկումների կազմակերպումը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս՝

Ա.Ս.Սադյան

Կատարող՝  
ՖԱԲ-ի գիտքարտուղար  
Ն.Դավիդյան (հեռ.՝ 524-780)





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК

24, Marshal Baghramian ave., 0019, Yerevan  
Tel.: +37410 527031  
Fax: +37410 569281  
E-mail: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Website: [www.sci.am](http://www.sci.am)

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24  
Հեռ.՝ +37410 527031  
Ֆաքս՝ +37410 569281  
Էլ.փոստ՝ [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Ինտ.կայք՝ [www.sci.am](http://www.sci.am)

0019. Ереван, пр. Маршала Баграмяна, 24  
Тел.: +37410 527031  
Факс: +37410 569281  
Эл.почта: [academy@sci.am](mailto:academy@sci.am)  
Веб-сайт: [www.sci.am](http://www.sci.am)

№ \_\_\_\_\_

«11» ապրիլի 2022թ.

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրոյան

Ի պատասխան Ձեր գրությանը առ 28.03.2022թ. №9/9.2.1/6709-2022 Արևիկ Սարգսյանի՝ Հերոնու հայելային դիտակի վերագործարկման անհրաժեշտության վերաբերյալ միջազգային աշխատանքային հանձնախումբ ստեղծելու վերաբերյալ դիմումի, հայտնում ենք, որ բարձրացված հարցը բազմիցս քննարկվել է տարբեր ձևաչափերով:

«Հերոնու ազգային տիեզերական կենտրոն» ծրագրի հետ կապված՝ Գիտության պետական կոմիտեն 14.04.2015-ի №10 Ա/Բ հրամանով ստեղծել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը, որում ընդգրկված էին նաև ՀՀ ԳԱԱ փորձագետներ՝ ալիքահավաքային համակարգի մանրակրկիտ գննումից հետո, հանգել էր այն եզրակացության, որ ՌՕԴ-54/2.6 դիտակի արդիականացումը և շահագործման ենթարկման աշխատանքները, պահանջում են մեծածավալ ծախսատար աշխատանքներ և գիտական նպատակահարմարություն չունեն:

Հաջորդ մասնագիտական քննարկումը տեղի է ունեցել 2019թ.-ի դեկտեմբերի 3-ին ԿԳՄՍ նախկին նախարար պրն. Ա. Հարությունյանի նախաձեռնությամբ: Մասնակիցների

ճնշող մեծամասնությունը կողմ են արտահայտվել ԳՊԿ-ի աշխատանքային խմբի 2015թ. կայացրած որոշմանը:

Նշենք նաև, որ նշված հարցի վերաբերյալ ի պատասխան «Հայաստանի իրավագործություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա.Ասլանյանի գրությունների, ՀՀ ԳԱԱ-ի դիրքորոշումը ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ի միջոցով փոխանցվել է Ա. Ասլանյանին (13.02.2020թ., ակադեմիկոս Ռ.Մ.Մարտիրոսյան) և անձամբ իրեն (22.10.2020թ., ակադեմիկոս Ա.Ս.Սաղյան):

Հարցը ևս մեկ անգամ քննարկվել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի բյուրոյի ընդլայնված նիստում՝ հրավիրված մասնագետների մասնակցությամբ 05.04.2022թ.

ՀՀ ԳԱԱ մասնագետները մնում են նույն կարծիքին և նոր հանձնաժողովների աշխատանքներում իրենց մասնակցությունը նպատակահարմար չեն համարում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս՝

Ա.Ս.Սաղյան



Կատարող՝  
Նարինե Դավիդյան  
Հեռ.՝ 524-780



## Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի

14.04.2015 թ. N 10-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի

1. ՌՕԴ-54/2,6 դիտակը ժամանակին առաջադիմական նախագիծ է եղել, նրա կառուցումն սկսվել է անցած դարի 70-ական թվականներին, 1985-87 թվականներին կատարվել են ռադիոաստղադիտակի անտենայի կարգավորման աշխատանքները: Այժմ այն լուրջ վերանորոգման կարիք ունի, ուստի ի վիճակի չէ գիտության ժամանակակից խնդիրներ լուծել: Հայաստանում ռադիոաստղագիտությամբ զբաղվող գիտական դպրոցի բացակայության պատճառով իրատեսական չէ նաև Հայաստանում այն գիտական կամ կիրառական խնդիրները ձևակերպելը, որոնք կարելի կլինեն լուծել ՌՕԴ-54/2,6-ի օգնությամբ:

2. ՌՕԴ-54/2,6-ի օգնությամբ ռադիոաստղագիտության, կապի ու կառավարման համակարգերի, անտենային տեսության և տեխնիկայի, այլ հարակից ոլորտների ժամանակակից գիտական խնդիրներ լուծելու հնարավորություններ ստեղծելու համար անհրաժեշտ է զգալի միջոցներ ներդնել, հիմնովին փոխել ռադիոդիտակի կառավարման համակարգերը, օգտագործելով այն փաստը, որ տվյալ ոլորտում գիտական սարքաշինությունը հսկայական առաջընթաց է կատարել վերջին տասնամյակների ընթացքում: Անհրաժեշտ է ռադիոդիտակի նյութական արժեքի մեծ մասը կազմող անտենան կարգաբերել, վերանորոգել ռադիոդիտակի մի շարք այլ համակարգեր: Սակայն ՌՕԴ-54/2,6-ը շահագործման վիճակի բերելու համար անհրաժեշտ հսկայական միջոցներ ներդնելը ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության համար հատկացվող միջոցներով անհնար է:

3. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության համար հատկացվող միջոցներով իրատեսական և արդյունավետ չէ անգամ ներկայիս վիճակում ՌՕԴ-54/2,6 պահպանելու համար համապատասխան ֆինանսներ հատկացնելը:



4. Առաջարկվում է՝

- Դիտակի վերաշահագործման նախաձեռնողներին (Արևիկ Սարգսյան և այլոք) օտարերկրյա գործընկերների, միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ մեկտեղ փորձել մշակել ՌՕԴ-54/2.6 ռադիոդիտակի և նրա շուրջ եղած ենթակառուցվածքի բազայի հիման վրա գիտակրթական կենտրոնի ձևավորման և գիտական տուրիզմի զարգացմանն ուղղված համատեղ բիզնես-ծրագիր՝ այն միջազգային կամ այլ ներդրումային համագործակցության շրջանակներում իրականացնելու նպատակով:
- Չափագիտության ազգային կենտրոնի ղեկավարությանը՝ հաշվի առնելով ՌՕԴ-54/2,6-ի շուրջ (Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի Օրգով գյուղ) ձևավորված ենթակառուցվածքի՝ կառույցի, հարակից շինությունների ու տարածքի պահպանման ծախսերը հոգալու խնդիրը, հանրապետության համապատասխան կառույցների, կազմակերպությունների, ինչպես նաև վերոհիշյալ նախաձեռնող խմբի հետ քննարկել գիտակրթական գործունեության և գիտաուսումնական տուրիզմի շրջանակներում տարածքը կիրառելու հեռանկարը և հնարավորությունները:

Սամվել Հարությունյան

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի  
նախագահ (աշխատանքային խմբի  
ղեկավար),

Արսեն Հախումյան


ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի  
ինստիտուտի տնօրեն,


Ալբերտ Դուլյան


ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի  
ինստիտուտի կիրառական ռադիոֆիզիկայի  
լաբորատորիայի վարիչ,


Վահան Սահակյան


Չափագիտության ազգային ինստիտուտի  
օրենսդրական չափագիտության գծով տնօրեն,

Նորայր Խաչատրյան  Չափագիտության ազգային ինստիտուտի գիտական չափագիտության ծառայության ղեկավար,

Նորայր Յուլյան  Չափագիտության ազգային ինստիտուտի էտալոնների պահպանման բաժնի վարիչ,

Վարդան Սահակյան  ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ

Ռուզան Ասատրյան  ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ,

Անուշ Հովհաննիսյան  ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի գլխավոր մասնագետ